

ծովեկանց մեծ մասը... Մեծահասակ, սակայն կենդանի է բարեկամների և ծանօթների սրտում...

Արքայազն Ստեփանի մահուամբ բարեկամները կորուցին մի աղետ սիրտ, ազգականները մի քաղցր հոգի և ծանօթները մի հաւատարմ հոգեկոտոր: Նրա մահուամբ, կարող ենք այս համարձակ ասել, հասարակական պակասաց մի աշխատող և յուսալից անդամ...

Եւ դորա պէս մի գիտէ թանկը անյայտանում, կորչում են վաղահաս պակասելով միշտ ընդհանրութեան համար...

Ընդունել, այսու, մի անձնանուէր ընկեր, հաւատարմ բարեկամ, ցուրտ ապաստանարանի մէջ, մի անկողնի, եղբայրական սիրոյ հաւաստին: Անշնչելի պիտի մնան միայն մտացոյց մէջ այն սիրալիր և ճշիւ խորհրդածութիւններ, որ կրկնում էին ինձ, երբ ամբողջ գիշերներ հսկում էի մահճիկ մօտ...

Առաջին Սարգիսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՐԻՆ

Թիֆլիս, 25 սեպտեմբեր

Նրբ թիֆլիսում հիմնական իրաւարանական գրասենեակը (Юридический кабинет), շատ տեղերից համակրութիւններ յայտնվեցան, շատերը ողջունեցին և յաջողութիւն ցանկացան այդ նորարար հիմնարկութեան: Երբեք անկողնի անկողնի իրաւաստանական դրժերում, ցոյց տալ նրան ճանապարհ և կանոններ իր զատատանական դրժերը ղեկավարելու, և վերջապէս պաշտպանել նրա իրաւունքները զանազան զեղծումներից և այլն...

Յիշատի նպատակը այնքան բարի է, այնքան դժուար է, որ ամեն մի ճշմարիտ մարդու յատուկ տարատանականութիւնն է յաջողութիւն ցանկանալ և օգնել այդ հիմնարկութեան: Բայց այդ գրասենեակը իր գործունէութեամբ համապատասխանում է արդեօք իր ընտրած նպատակին և կոչման: Մենք մեր խօսքերը չերկարացնելու համար այստեղ մի օրինակ կը բերենք նրա գործունէութիւնից:

«Նրբ նրանք հեռացան, որ տեղափոխել իմ ձին և նրան ճարակ տան, ծերունին ինձ հետ միայնակ մնալով, ասաց:

— Գուցէ դարձեալ այդ նախադրուածութիւնների համար, որ ես գործ եմ դնում: Այժմ մեզ մօտ այն ժամանակները չեն մնացել, որպէս առաջ էր, երբ որ թագաւորում էր ազատութիւնը մտածելու և զգալու, որպէս մարդ ցանկանում էր: Մեր այժման մտաւոր ծանօթութիւնը իրանցիներին հետ ծանօթացրեց մեզ մահմեդական մեղաւորութեան բոլոր ցնորարանութիւնների, բոլոր այլադատութիւնների հետ: Առաջ մեզ համար մի և նոյն էր՝ թէ բրիտանիան, թէ մուսուլմանը և թէ մինչև անգամ ջնոզը, երբ պատահում էր ներքանց հիւր լինել մեզ մօտ: Իսկ այժմ մուսուլման չը լինել մի սարսափելի արատ է, և ես մեր ամբողջ վրամաբնականի կողմից ինձ պիտի ենթարկեմ անսխալութիւնների, նրա համար, որ պահեցի ինձ մօտ մի քրիստոնեայ հիւրին: Եւ ընկալեցի, այդ մեղաւորութիւնը այժմ այն աստիճան արմատացել է մեր մէջ, որ ես այդ ղեկավար չեմ կարող հաւատալ մինչև անգամ իմ հարազատ որդիներին: Գրա համար էլ ես հնարեցի այն առաջադրութիւնը: Խորասանցու կեղծ անունով դու կապրես մեզ մօտ, որպէս ըստ մեջ: Ամենքը կաշխատեն որոնելու ըստ բարեկամութիւնը, եւ քեզ զրանից յետոյ պիտի կոչւի Մահմէդ: Եւ որպէս զի դու ստիպւած չը լինէիր կատարելու մեր մահմեդական ծէսերը, ես հնար գտայ զրանից ես քեզ ազատելու:

— «Ախ, Ձեռնուղ, յառաջ տարաւ ծերունին, — ճշմարիտ ասած, շատ ցաւալի է, երբ մտածում ես, թէ ինչ ժամանակների ենք հասել, որ ես ստիպւած եմ խաբել, սուտ խօսել մինչև անգամ իմ զաւակների տոջին: Ո՛ր կորստ մեր նախնական անկեղծ պարզութիւնը, մեր սրտերի ուրախութիւնը: Այդ բաւական չէ, ստիպում են մեզ թաղանթ մեր կրկնակրկին, ստիպում են վախճանել նրանց չաղրանքները և պահել: Իսկ մենք, տղամարդիկներս, պէտք է բոլոր աշխատութիւնները կատարենք, վախճանելով, մի գուցէ մեր կրկնակրկին դուրս հանելով, մի որ և ինչ մարդ կը տեսնէ նրանց երեսները: Ես լսեցի, որ փանախ-խանը, պարսից խաների սովորութեան

Նորբում մէկ կէն, զատատանական մէկ թեթիւ գործ ունենալու պատճառով ներկայանում է այդ գրասենեակը խորհուրդ հարցնելու: Գրասենեակի օրապահ-իրաւարանը խորհրդի համար սովորական մէկ բոլոր առեւելաց յետոյ, հարց ու փորձ է անում կնոջ և յայտնում է որ գործը շատ թեթիւ է և պահանջում է որ իրան ներկայացնէ զատատանական թղթեր—գոյումնաներ: Կնոջ այն հարցմունքին թէ քրքան ծախս կունենայ այս գործի վերջանալը, իրաւարանը պատասխանում է որ հազիւ թէ կը ծախսվի ընդամենը քսան և հինգ (25) բուրլի: Նշանակեալ ժամին կինը ներկայացնում է գոյումնաներ և իրաւարանը ասում է, որ կինը դալ միւս օրը, մինչև ինքը թղթերը կարդալուց յետոյ գործը կը կարգադրէ: Միւս օրը կինը ներկայանում է գրասենեակը և որքան մեծ է լինում նրա զարմանքը, երբ իրաւարանը այս թեթիւ գործի համար բացի արտաքոյ ծախսերից պահանջում է երկու հարիւր (200) բուրլի, ասելով որ եթէ առանձին իրաւարանին յանձնես, չորս հարիւր (400) բուրլուց պակաս չի յանձն առնի: Երևակայիր ընթերցող մէկ օրում մէջ 25 բ. հասաւ 200 բուրլուն... Ի հարկէ կինը յայտնում է իր անբաւականութիւնը և յետ է պահանջում իր գոյումնաները: Իրաւարանը բացատրում է և աշխատում է համոզել կնոջ, որ 200 բ. շատ չէ, և հաշուում է մահմանում թէ այս է հարկաւոր, այն է հարկաւոր և վերջապէս խնդիր դրել 25 բ. արժէ և այլն... Երևակայիր ընթերցող, միմիայն մէկ խնդիր դրել, որ պէտք է արուի նահանգական դատարանին (Окружный Судъ) արժէ 25 բ.: Իրաւարանը անհնկով որ չը կարողացաւ կնոջը համոզել, պատճառ է բերում թէ գոյումնաներից մէկ թանկը իր մօտ չէ, այլ միւս օրը կարող է գալ և բոլորը միասին ստանալ: Կինը հեռանում է և իրաւարանը դարձեալ յետեւի կանչում է, որ թող լաւ մը տա՞նք, 200 բ. շատ չէ և այլն...

Կինը նորից ներկայանում է գրասենեակը և տեսնելով որ իրաւարանը դարձեալ գոյումնաները յետ դարձնելու միտք չունի, դիմում է իր մի քանի բարեկամներին և նրանց հետ միասին ներկայանում է նորից գրասենեակը: Վերջապէս շատ խօսելուց յետոյ իրաւարանը համամատ, արդէն կազմակերպում է իր համար մի ամբողջ հարեմ. նրան պակաս են միայն ներքինիները (թող Ալլահը ուղարկէ նրանց վրա իր նշովը): Այժմ փանախ-խանի կնիկները արդէն թաղանթ են չաղանքի մէջ և երեսների վրա կրում են անթափանցիկ, ցանցառեղակ քօղ (բուրլի): Այդ վտան, շատ վտան է...

«Այդ բոլոր խօսքերը ասում էր ծերունին կիսաճանաչով, խախտալով, մի գուցէ լսէին նրա զատուածութիւնները:

«Արեգակը մայր մտաւ: Փիշու մահը կարգացաւ աղանը հրապարակով աղօթելու: Ծերունին թողնելով ինձ, դիմեց զեպի մի տաղաւար, որ ծառայում էր մէջիդի փոխարէն: Այնտեղ ամեն կողմից թափվում էր ժողովուրդը աղօթելու համար: Եւ մնացելով միայնակ, նստած թաղերի վրա, որ տարածված էր ծերունու խրճիթի առջև, և մեծ բաւականութեամբ նայում էի երեկոյան սքանչելի արշալուռի վրա, որը ոսկէ գունով նկարում էր երկինքը:

Կ.

ԴԵՂԵՅԻՆ ՍԱԼԻԶԱՆ

«Ծերունին վերադարձաւ շատ ուշ, իր երկու որդիներին հետ, և խնդրեց ինձ մօտնել տաղաւարը, որ պատրաստված էր ընթերցելու: Այնտեղ տեսայ նրա կնոջը, որի անկեղծ, ուրախ կերպարանքը ինձ խիստ հաճելի թուեցաւ: Կնոջ մօտ նստած էր ծերունու դուստրը, մի մանկահասակ, տաան և վեց տարեկան աղջիկ, որ դառնում էր մեզ համար ոչնչորի կաթ պատրաստելու: Նա վաղաքանգը նայելով վրա, և թեթիւ կերպով դուրս տալով, ողջունեց ինձ: Ախ, իմ սիրելի աստղազէտ, երկրքի վրա գտնված բոլոր աստղերը չէին կարող համամատել նրա սև աչքերի վաղիկ հետ: Նրա արեւից վառված զեպի վրա ներկայում էր մի տեսակ կախարհիչ հրապուրանք: Եւ չէի կարողանում աչքերս հեռացնել նրանից, և խորին հոգեզմայլութեամբ, դադարուկ նայում էի սքանչելի Սալիզայի վրա:

«Ես ընկալեցայ այդ բարեկամ մարդիկների մօտ, և ամեն օր բախտ ունէի տեսնելու իմ նահելի Սալիզային: Ես օրըստօրէ գրում էի աւելի աստիկ սէր զեպի այդ աննման աղջիկը, որը իր

առեւելով նրանցից 4 բ., գոյումնաները հազիւ հազ յետ է դարձնում ասելով թէ թղթերը այսքան ժամանակ ինձ մօտ են եղել, փող է հարկաւոր և այլն... Կարծես թէ թղթերին դարի ու դարման է ուտեցրել: Ահա ընթերցող, այսպիսի իրաւարաններին է վիճակված պաշտպանել ժողովուրդի իրաւունքները: Իսկ մենք անկեղծ սրտով կը ցանկանանք նորարար իրաւարանական գրասենեակին իր գործունէութեան մէջ աւելի ազնիւ լինել...

Կռոնոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց «С.-Петербург. Вѣдом.» լրագրի № 251 մէջ հրատարակեցաւ մի յօդուած «Անգլիայի քաղաքականութիւնը և գործունէութիւնը Փոքր-Ասիայում» վերնագրով: Յօդուածը շատ երկար է և խօսում է այն բանի վրա թէ Անգլիան աշխատելով Փոքր-Ասիայի հայերի մէջ բարեփոխել լուսաւորական եկեղեցին, իսկապէս դիտարկում է իրեն ունի մտցնել թիւրքաց հայերի մէջ անգլիկան եկեղեցին: Յօդուածը ցոյց է տալիս այն վտանգը, որ կարող է ծագել Ռուսաստանի ազդեցութեան համար Փոքր-Ասիայում, եթէ Անգլիան ազդեցութիւնը կը նուազի թիւրքաց Հայաստանում և ընդհակառակն անգլիկան եկեղեցու տարածվելով հայերի մէջ, կաւեւանայ Փոքր-Ասիայում, Անգլիոյ վրասին հարեան երկիրներում, Անգլիայի քաղաքական ազդեցութիւնը: Յօդուածագիրը խօսելով Անգլիանի և մանաւանդ Մանիկունու արած զեղծումների վրա, ցոյց է տալիս որ այդ զեղծումների պատճառով բողոքականութեան տարածվելը աւելի և աւելի հաստատ արմատներ է գցում հայոց ժողովրդի մէջ: Մենք չենք կամենում քննադատել Ռուս լրագրի յօդուածագիր հայաքննելու և նրա քաղաքական դատողութիւնները, բայց կը նկատենք այստեղ որ ինչպէս երևում է Ս. Պետերբուրգի լրագրի յօդուածագիրը տեղեկ չէ հայերի մէջ յայտնվող բողոքականութեան շարժման մասին և խառնում է բոլոր բողոքական եկեղեցիները միմեանց մէջ: Մենք կուզենայինք խօսել միմիայն յօդուածի փաստական կողմի վրա: Յօդուածագիրը իր

կատարեալ տգիտութիւնն է ցոյց տալիս, կարծես թէ որ անգլիկան եկեղեցու մէջ, որ հին հայոց եկեղեցու պէս և պիտի ուղիւստական է, ամենիկական միաբնակների սրբապաշտարանի մէջ, և Անգլիոյ վրասում լուծեալականութեան յայտնվելու մէջ որ և է ներքին կապ կայ: Ընդհակառակն այդ բոլոր եկեղեցիները միմեանց հակառակ են: Յօդուածագիրը յիշում է պ. Ամիրխանեանցի պըրօպագանդա թիֆլիսում և ուղում է նրա մտքերի, ամերիկական միսիայի և անգլիկան եկեղեցու ձգտումների մէջ կապ ցոյց տալ: Բայց Ամիրխանեանց և նրա համակրաները նոյն են ինչ որ զերմանացի աւետարանականները, միայն ազդութեամբ հայ են և իրանց հայ-աւետարանականներ են անուանում և ձգտում են հայոց աւետարանական ազգային եկեղեցի հիմնել: Ամերիկացի միսիոնարները մեթոդիստներ են և թշնամի են աւետարանական եկեղեցուն, բայց մանաւանդ նրանք թշնամի են անգլիկան եպիսկոպոսական եկեղեցուն, որ ունի եկեղեցական երարկիւս, ունի պատկանել եպիսկոպոսներ, ծէսեր, արարողութիւններ և շատ նման է հին լուսաւորական եկեղեցուն: Եւ շատ հաւանական է որ անգլիկացիները, ինչպէս պատասխանել «Մատիս» մէջ անգլիկան պարլամենտի անդամ Բրայս, կամենում են միմիայն բարեփոխել հայոց եկեղեցին և ոչ թէ անգլիկացին և հայերին: Ռուս լրագրի յօդուածագիրը բերօրեղատիական, չին օվիկական տեսակետից է նայում անգլիկան պրօպագանդայի վրա. նա կարծում է որ հայոց եկեղեցի բարեփոխելու ձգտումը պատկանում է անգլիկական կառավարութեանը և կապ ունի Անգլիայի ձգտման հետ իր քաղաքական ազդեցութիւնը տարածելու Փոքր-Ասիայի վրա: Յօդուածագիրը մոռանում է որ Անգլիան ապաւ հրկի է և նրա մէջ կարող են կազմվել հազար մի ընկերութիւններ, բոլորում անկախ կառավարութեան որ և է ազդեցութիւնը, որոնց գործունէութեան մէջ կառավարութիւնը չէ խառնվում և չէ էլ կարող խառնվել: Այդպիսով կազմվել է մի մասնաւոր ընկերութիւն, որ հետաքրքրվում է հայերով, որի նախագահ Կենտրոնիկ եպիսկոպոսն է, անդամներ թէ աշխարհական և թէ հոգեւորական անձինք, որոնք իրանց նպա-

ղաւիչ պարզամտութեան հետ միացրել էր խիստ ուրախ և կենդանի բնաւորութիւն: Նա կոչում էր ինձ կարգաւ (եղբայր) և երևում էր, որ մի առանձին բաւականութիւն էր գտնում իմ ներկայութիւնից: Այդ երջանիկ լուսնաբանների բաղը ու վարքի պարզութիւնը չէր արդեւում ազատ յարաբերութիւններ կրկու սեւերի մէջ: Այդ միջոց էր տալիս ինձ աւելի մօտ լինել Սալիզային և քաղցրացնում էր մեր բարեկամութիւնը միմեանք: Նրա եղբայրների վաղեմութիւններով: Նրա եղբայրների մէջ էր նա շատ անգամ ևս ձիով ման էր գալիս, դնում էինք օրաօրութեան, և եղայ նրանց հետ աւելի մօտեցում, քան թէ կարող էր լինել մի սերտ բարեկամ: Մենք սիրում էինք սանձահարկ անգուսպ, սաստիկ խոտերախ նոյնքներին, սիրում էինք թիւղելով նրանց վրա, կամ զեպի ցած սլանալ սարսափելի զանդիկներից և կամ բարձրանալ անհուն ժայռերի վրա: Մենք ձիու վրա կատարում էինք զանազան տեսակ խաղեր, երբեմն սաստիկ արագավազ ընթացքի միջոցում գետնից վեր էինք բարձրացնում օդի մէջ ձգած խնձորը, և կրկին նետում էինք միմեանց զլին վրայով: Երբեմն ջրի լի էինք խաղում, կամ քրտնալեղում նպատակին զիպչելու փորձով էինք անում, և ես ամեն օր սովորում էի աւելի և աւելի ճարպիկութիւններ, աւելի հմտութիւններ ձիավարելու մէջ:

«Սալիզան սիրում էր ինձ ամենազօր սիրով: Ես նկատում էի այդ նրա հիմնալի հայացքի մէջ, որը միշտ յառած էր լինում իմ վրա, նկատում էի նրա խորին ուշադրութեան մէջ զեպի այն բոլորը, ինչ որ ինձ էր վերաբերում: Բայց նա սիրում էր ինձ, ինչպէս մի եղբոր, ինչպէս իր միակ բարեկամին: Նրա սիրտը չէր կարող բաժանել այն սէրը, որը զգում էր զեպի ինձ, այն զգացմունքից, որ ունէր զեպի իր հարազատ եղբայրները: Այդ երկու հակումները, թէ զեպի ինձ և թէ զեպի իր եղբայրները, ոչինչով չէին տարբերվում նրա սրտում: Նրա մայրը միմիայն կին էր և մտածում էր միայն անային անասնութեան վրա: Ինձ ոչ տակաւ անգամ յաջողվում էր միայնակ մնալ Սալիզայի հետ, օգնել նրան կատարելու իր այն և աշխատութիւնները, և երբեմն դնալ նրա հետ ջուր բերելու լուսնային առուակներից: Այսպիսի

(Նը չարտանակվի)

տակ են դրել հեռու ասիական երկրում բարե-
փոխել մի հնադարեան եկեղեցի: Յողաճաճաճ
երկր ինքն չի ունի լինելով, չէ կարող երեւ-
կայել որ լինում են երկիրներ, որտեղ մասնաւոր
ընկերութիւններ կարող են գործել և կարծում է
որ ամեն բան պէտք է անպատճառ կատարվի
կառավարութեան հրամանով և թելադրութեամբ:
Այդպիսով յողաճաճաճ բոլոր եկեղեցիները մի-
մեանց հետ խառնելով, բողոքականութեան բոլոր
պրօպագանդայի մէջ տեսնում է Անգլիայի ինտ-
րիզան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Խեղիվ Տեֆիկ-փաշայի հանդիսով կայրիւ
մանելու մասին «Figaro» լրագրին հեռա-
գրում են սեպտեմբերի 26-ին: Առաւօտեան
10 ժամին թնդանովները որոտումը յայտ-
նեց բնակիչներին, որ խեղիվ հեռանում
է Ալեքսանդրիայից, որտեղ նա ստիպված
էր երեք ամիս մնալ: Բնդարական հեծե-
լադրերից 100 զինուորներ արշաւում էին
կառքի առաջ, որի մէջ նստած էին անդ-
լիական զինուոր հիւպատոս Մէլետ և խե-
ղիկ: Ալեքսանդրիայի նահանգապետը իր
շտաբով հեռանում էր կառքին: Գնացքը ծած-
կում էր հեռանալիս մի լուսմբ, որ ձիանե-
րի վրա էր նստեցրած: Ալեքսանդրիայից մի-
ջին կայրիւ երկաթուղու կայարանները զար-
դարված էին դրօշակներով և պահպանվում
էին անգլիական զորքերից: Ժամի երեք և կէ-
սին երեւեցաւ խեղիվ գնացքը: Երբ նա հա-
սաւ կայրիւի կայարանին, ամրոցից 21 անգամ
թնդանով արձակեցին: Կայարանը շատ գե-
ղեցիկ էր զարդարված: Կայարանի մօտ գե-
ներալ Ուէլլէյ և գեներալ Էլի սպասում
էին խեղիվին, որ, դուրս գալով վազմին
Մէլետի և իր մինիստրների հետ, մի քանի
րօպէ խօսեց Կոնստանտի դուքսի հետ և յե-
տոյ մօտեցաւ զինուոր հրամանատար գե-
ներալ Ուէլլէյին: Բոլոր բարձր աստիճա-
նաւորները, Էլ-Խալաթ մէլիքի շէյխները,
կառքին, ուղեկները և անուանները սպա-
սում էին խեղիվին: Այդ անսովոր ընդուն-
ելութիւնը մեծ ապաւորութիւն գործեց
Տեֆիկ-փաշայի վրա, որ կարողացաւ ուշքի
գալ միայն մի քանի րօպէներից յետոյ: Նա
անցաւ կայարանը և նստեց կառքը Կոնս-
տանտի դուքսի հետ, չը լսելով շէյխ-ուլ-իս-
լամի սկսած ճառի վերջը: Երկաթուղուց
մինչև պալատը այնքան շատ ժողովուրդ
կար, որ կառքը հազիւ էր կարողանում
անցնել: Բոլոր աները զարդարված էին դրօ-
շակներով և տերևներով: Կոնստանտի դուքսի
զվարդիայից 100 մարդ գնում էին խեղիվի
կառքի առաջ, որին հետևում էին բազմա-
թիւ կառքեր անուաններով: Ժողովուրդը
դրօշակներ էր բարձրացնում և իւրաքան-
չիւր արաբական մեծ տուն ի նշան ուրա-
խութեան մի անասուն էր մօրթում: Մօտ
15,000 մարդ լցրել էին փողոցները, որ-
տեղից անցնում էր խեղիվ և արանց ուղ-
ղութեամբ անգլիական զորքեր էին կանգ-
նած: Ի պատիւ խեղիվի մեծ ցոյցեր արին
և նրան շատ լաւ ընդունեցին: Բոլոր պատ-
րաստութիւնները անգլիացիներն էին տե-
սել: Երեկոյեան քաղաքը լուսաւորված էր:
Խեղիվը գրօսնում էր քաղաքի մէջ և նրա
կառքին հետևում էին բնակիչները: Լու-
սաւորված մէլիքները, զարդարված աները
և ամբողջ փողոցների մէջ մեծ կենդանու-
թիւն էին տալիս քաղաքին և ոչինչ բան
չէր յիշեցնում այն ողբերգութիւնը, որ ե-
րեք ամիս շարունակ կատարվում էր այդ
քաղաքի մէջ, բայց անգլիական զորքերից
որոնք պահպանում էին արհեստական ողե-

ւորութիւնը: Այսօր, սեպտեմբերի 26-ին,
առաւօտը խեղիվը ընդունելութիւն ունէր:
5,000 աւելի անուաններ եկել էին խե-
ղիվի ձեռքը համբուրելու համար, որ աշ-
խատում էր չընդունել Արաբի-փաշայի կող-
մնակիցներին: Տեֆիկ-փաշա խառնութեամբ
վարկեցաւ մինչև անգամ ուղեկների հետ,
որոնց մեղադրեց առաջին անկարգութիւն-
ների ծագման մէջ: Այնուհետև խեղիվին
ներկայացան անգլիական զենքերները և
ղիլօմաստական ներկայացուցիչները: Մի-
նիստրների խորհրդի վճիռ համեմատ
զինուորական դատարանը 10 օրից յետոյ
կը սկսէ իր պարապմունքները: Մեղադր-
վածները 22 մարդ են, որոնցից եօթին մա-
հուան պատժի կը դատապարտեն: Մահա-
ւանդ ծանր են մեղադրանքները Ալեքսան-
դրի և Տուլթա-փաշայի դէմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ֆրանսիական հանրապետութեան նախագահ
Գրէվը, սեպտեմբերի 30-ին, փարիզ վերադա-
ռաւ:
— Սեպտեմբերի 29-ին Ֆրանսիական հանրա-
պետութեան համարաւ բոլոր քաղաքների մէջ պա-
տարագրեց մատուցվեցան Հէնրիէտ Մի ծննդեան
առիթով: Փարիզում պատարագ մատուցվեցաւ
Սենթէրմէն-դէ-պրէ եկեղեցում, ուր կոմս Բլալաս
թագաւորին էր փոխարինում: Պատարագին ներ-
կայ եղող անձինքների թիւում նկատելի էր կաթո-
լիկ հոգեւորականների մեծ թիւ: Բոլոր ներկայ
եղողները սպիտակ շուշաններ ունէին: Նախըն-
թաց երեկոյեան, Վոսթրա փողոցում կայացաւ
պահպանողականների առաջին բանկէտ, որին
մասնակցում էին 350 անձինք: Թագաւորի կե-
նաց առաջարկեցան, իսկ «Köln Zeitung» լրա-
գրի խօսքերով, ստորագրութիւններով լի մէկ աղ-
բէս կազմեցին, որի մէջ յայտ են յայտնում, որ
թագաւորը իր խոտմունքը կը կատարի և շու-
տով հայրենիք կը վերադառնայ, Ֆրանսիան և
կաթոլիկ եկեղեցին ազատելու համար:
— Լոնդոնից լրագրներին հեռագրում են սեպ-
տեմբերի 22-ին: Գաղղտոն երէկ Գաղղտոնի վե-
րադարձաւ: Երկաթուղու կայարանում նրան մէկ
աղբէս ներկայացրին, որին պատասխանելով, Գը-
ղղտոն գովում էր բրիտանական զօրքի վար-
մանը: Երկրպագութեամբ, որ աղաւթ երկիրը
զին-
ւորական բռնակալութիւնից, որի ժամանակ ոչ
մէկ երկիր չէ կարող զարգանալ. նա յայտ ունի,
որ շուտով Երկրպագութեամբ կը բարեօրէն:

ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ

Դադկահատութիւնը Չինաստանում կատարվում
է ոչ թէ ձեռքի կամ ոտքի վրա, այլ քիւրի վրա:
Մինչև այժմ չինական տէրութիւնը վարձատրու-
թիւն էր տալիս ամեն մանուկին, որ կտրած ու-
նէր ծաղիկը: Բայց որովհետև հարուստ ընտա-
նիքներից շատերը արհամարհում էին այդ վար-
չական վարձատրութիւնը, աւելի լաւ համարելով
կուսութեան մէջ պահել իրանց հատուկիքի դը-
ծարանը, այդ պատճառով նորերում կայարա-
կան հրօլարտակով ծաղկահատութիւնը հրամա-
րված է պարտադիր անել չինական ազգի բոլոր
դասակարգերի մանուկներին համար, իսկ զանց
առնողին ենթարկել զրամական անպակն տու-
գանքի:
* * *
Կ. Պոլսի «Մասիս» լրագրում կարդում ենք որ
պ. Մինաս Չերազ յատուկ նամակով անգլի-
կան եկեղեցու ընթացքի վրա պ. Ջէյմս Բրայսի
ուղարկութիւնը հրաւրած լինելով, բրիտանական
պարլամենտի հայաստէր անդամը այս մասին հե-
տեւել կարծիքն է յայտնել իր պատասխանագրի
մէջ դէպի պ. Չերազ: «Յաւ է ինձ լսել այն գոր-
ծողութիւնը, որ դուք վերագրում էք Կէնտերը-
րի արեւելակիողութիւնը և իր պաշտօնակիցներին,
իրաւունքով համար անգլիկան վարդապետու-
թեան ծաւալումը փոքր-Ասիայի մէջ: Չեմ կարող
հաւատալ թէ նրանց բուն նպատակը այդ եղած
լինի. նրանք անշուշտ քիչ թէ շատ համակարգը
կարող էին յայտնած լինել Մկրտիչ արքեպիսկո-
պոսին, որի վրա անկարծում էք, բայց երբեք
չէին համարձակիլ հայ-լուսաւորչական եկեղեցու

գործերի մէջ խառնվելու մեծ սխալը գործել, այն
եկեղեցու, որի համար գիտեմ թէ իրանց յար-
գանքն են յայտնում միշտ: Արդարեւ փոքր-Ասիայի
մէջ անգլիկանութիւն տարածելու գաղափարը
տղայական է թվում ինձ: Անգլիացի քրիստոնեա-
ների նպատակը պէտք է լինի իրանց կարողա-
ցածին չափ և զբաղակալ օժանդակութիւնը նուր-
իւր հին հայկական եկեղեցուն, որպէս զի սա
ինքն իրան գտվի և զարգանայ, առաջ մղելով իր
կղերի դաստիարակութիւնը և թօթափելով այն
աւելորդագաղափարները, որոնք սպրդած են
իր ժողովրդի մէջ. այս պէտքէ լինի մեր եկեղեցու
նպատակը և ոչ թէ ձեռք եկեղեցու կործանման
վրա աշխատել, կամ ջանալ որ մեր եկեղեցին
անցնի ձեռք տեղիչ»
* *

Վ. Ի. Կ. Ե. Զ. Ե. Դ. Այս օրերս, Վերանկօ գիւ-
ղը, Նորմանդիայում, տօնախմբութեան կերպա-
րանք ընդունեց. Վիկտոր Հիւգօն, որ ինքն էր գնա-
ցել իր բարեկամ Պոլ Մէրիսի մօտ, այս վերջինի
աղջիկներին օգնութեամբ մի խնջոյք սարքեց, ուր
հրաւիրվեցան թէ այդ գիւղի, և թէ չըջակաների
աղբատ երկխաները, բոլորը մօտաւորապէս 80 հո-
գի: Կաղիկներով և դրօշակներով զարդարված դահ-
լիճի մէջ, պատանի ամբոխին նստեցրին երկար սե-
ղանի շուրջը, և նրանց վրա հոգացողութիւնը յանձն
առան Վիկտոր Հիւգօն մօտ եկած նկարիչների և
մատենագիրների կանայքը և աղջիկները: Ճաշի ժա-
մանակ դահլիճը մտաւ «Թաւառներ» ստեղծու-
ղը և ներկայ եղողներին դիմեց հետեւեալ ճառով.
«Երիտանիս, ես ձեզ մօտ եկայ: Ընդունեցէք ինձ
այնպէս, որպէս սովորաբար ընդունում են ինձ
իմ թոռները, Ժօրթ և Ժան: Ես ես չեմ որ նոյն-
պէս ձերն եմ. մեր մէջ միայն մի գնահատու-
թիւն կայ—տարիքների գնահատանութիւնը: Գուք
պարտաւոր էք սիրել նրանց, որոնք սիրում են
ձեզ: Սիրեցէք այժմ ձեր ծնողներին, իսկ երբ որ
դուք կը մեծանաք, սիրեցէք ձեր հայրենիքը: Գուք
փոքր էք, դուք թոյլ էք, դուք աղքատ էք, դուք կա-
տարեալ իրաւունք ունէք մեր հոգացողութիւնների
վրա: Ուսումնարանում և ազատարանում դուք
կը սովորէք այն ամենը, ինչ որ հարկաւոր է ձեզ
գիտենալ: Այժմանից արդէն դուք կտուժէք կեան-
քի բնօր, ժամանակով այդ բնօր կուտի կը ծա-
րանայ, բայց այսօր մոռանալու ամեն բան և մի-
ասին քէֆ անկեք, ուտեցէք և խմեցէք: Ես օր-
նում եմ ձեզ»: Այդ ճառից յետոյ Վիկտոր Հիւ-
գօ նստեց երկխաների մօտ և կարծես երկայն էր
մանուկներին մէջ: Ապա երաժշտութիւն հրաւրե-
ցին, իսկ երեկոյեան համար Մէրիս հրաւարու-
թիւն պատրաստեց:
* *

Առանձնապէս ժողովված տեղեկութիւններից
երևում է, որ արտասահմանեան համալսարաննե-
րում ուսում առնող ուսանողների և ուսա-
նողուհիների թիւը վերջին տարիներում սաստիկ
մեծանում է, այնպէս որ եւրօպական համալսա-
րաններից իւրաքանչիւրի մէջ կարելի է բազմաթիւ
ուսանող երիտասարդութիւն գտնել: Գեո-
շատ մօտիկ ժամանակներում, ուսում առնելու
համար արտասահման գնացող ուսանող մանուկ
էին բացառապէս մեծ քաղաքների մէջ գտնվող
համալսարանները, որից անկէղբերդի, փարիզի,
Վիւրցերըրի և այլն. բայց վերջին տարիներում
ուսանող սկսում են մանկ ֆրանսիական, իտա-
լական և չվեյցարական համալսարանները, ուր
ուսման վարձը և կեանքը աւելի էժան են նըս-
տում, քան թէ մեծ քաղաքներում: Արտասահմա-
նեան բոլոր համալսարաններում այն երեկոթիւն է
նկատվում, որ ուսու ուսանողները դոկտօրի աս-
տիճան ստանում են 4 և մինչև անգամ 3 տա-
րում, այն ինչ տեղական ուսանողները մը-
նում են համալսարանում 5-ից մինչև 6 տա-
րի: Այդ նրանով է բացատրվում, որ ուսու երի-
տասարդութիւնը, սովոր չը լինելով կորպորացի-
ական կեանքի, չէ մասնակցում տեղական ուսա-
նողական ժողովներին, և առանձնապէս լինելով
այնքան ժամանակ չէ կորցնում գաղութուր խմի-
ւոռ, մեղմամարտի և այլ դուրսբերութիւնների վրա:
Պրօֆեսորները գովում են ուսանողին, որպէս ա-
ւելի ծանր և զիտութեան նուիրված ուսանողնե-
րին: Բերլինում, Բազելում և Ժնէվում կան ուսու
ուսանողներ, որոնք պրօֆեսորների մօտ ասի-
տեղական թէ ինչպէս է վերաբերվում չվեյ-
ցարական համալսարանական վարչութիւնը դէպի
ուսու ուսանողները, երևում է նրանցից, որ մի-
ջոցներ չունեցող ուսանողներին յաճախ աղա-
տում են ուսման վճարից: Վերջին ուսումնական

տարվայ չվեյցարական համալսարանական հաշիւ-
ներից երևում է, որ վերջին սեմեստրում ուսու
ուսանողների թիւը էր Բերլինում 42 հոգի, որոնց
թիւում և 27 կանայք, Ժնէվում—20, ի Թիւս
որոց 11 կանայք. 8իւրիլում—14, որոնցից 4
կանայք էին. Բազելում երկու ուսանող: Շվեյ-
ցարական չորս համալսարաններում բոլոր ուսու
ուսանողների թիւը ներկայ տարում հետեւեալն է.
36 տղամարդիկ և 42 կանայք: Նրանցից բժշ-
կական ֆակուլտետում 36 կանայք են գտնվում
և 22 տղամարդիկ: Բնագիտական ֆակուլտետում
11 տղամարդիկ և 6 կանայք: Շվեյցարական հա-
մալսարաններում բոլոր օտարազգիները 290 են,
ի Թիւս որոց 56 կանայք: Ներկայ տարում հրա-
տարակված ուրիշ համալսարանների հաշիւներից
երևում է, որ Բերլինում գտնված 234 օտարազ-
գիներից, 24-ը ուսանող են, որոնցից 16 մարդիկ
գրված են բժշկական ֆակուլտետում 13 պրոֆեսոր
173 օտարազգիներից 35-ը ուսանող են, որոնցից
4-ը բժշկական ֆակուլտետում են սովորում: Վի-
էննայում 244 օտարազգիներից 31-ը ուսու ուսա-
նողներ են, որոնցից 11-ը բժշկական ֆակուլտե-
տում են գտնվում: Փարիզի բժշկական ուսում-
նարանում 36 ուսու ուսանողներ կան և 5 կանայք,
իսկ ազատ լսողներ 15 կանայք և 5 տղամար-
դիկ:
* *

Անգլիական մի մասնագիտով քննելով Անգլիայի
մէջ գտնված խելագարների տները կամ դժա-
նօցն երի դրութիւնը, յայտնում է, որ վերջին
ժամանակներում գտնացողների թիւը այդ երկրում
կրկնապատկեցաւ: Հաշիւից երևում է որ Անգ-
լիայում 61 դժանոց կայ 70,000 հիւանդների:

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵՆՑ

Կ. ՊՈԼԻՍ, 28 սեպտեմբերի: Սուլթանը,
հիմնվելով 1867 թուականի Ֆերմանի վրա,
մտադիր է պահանջել, որ եղբայական
ապստամբութեանը մասնակցողների մասին
մահուան պատիժները սուաշադրվեն նրա
հաստատմանը:

8ԵՏԻՆԵ, 28 սեպտեմբերի: Չերնօգորիա-
կան կառավարութեան և թիւրքաց գեա-
պանի մէջ բանակցութիւններ սկսվեցան աշ-
բանցիների Չերնօգորիայի վրա յարձակվե-
լու մասին գործերը վերջացնելու համար:

ՓԱՐԻՉ, 28 սեպտեմբերի: Երէկ համա-
ձայնութիւն կայացաւ փարիզի բանկերից
մէկի հետ Անգլիական երկաթուղիների
ուսուայ ընկերութեան 400000 րուբլու 3%
օրիգացիաների հրատարակման մասին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 28 սեպտեմբերի: Ֆի-
նանսների մինիստրութիւնը զործարանաւե-
րից մանրամասն տեղեկութիւններ պա-
հանջեց որոշելու համար, թէ ինչպիսի գոր-
ծարանական աշխատանքներ և ինչ չափե-
րով յարմար են անչափահաս աշխատուոր-
ների համար: Տեղական ֆինանսական վար-
չութիւնը վերականգնող խորհուրդը ներ-
կայումս զբաղված է ուղղակի հարկերի
վարչութեան հարցով: Ենթադրված է կա-
րելութեան չափ սահմանափակել երկա-
թուղիների ծախսերը եկամուտներից այն-
պիսի առարկաների համար, որոնք հարկա-
ւոր չեն ուղղակի շարժողութեան համար:

ՕԴԵՍՍԱ, 28 սեպտեմբերի: Փոթորակի
եղանակը սե Ծովի վրա խանգարում է ու-
ղարկել բեռները Օդեսայից և Կերչից փո-
թի և հակառակ:

ԿԱՐԱՉԵՎ, 28 սեպտեմբերի: Չեմսովի
ժողովը վճռեց, խնդրել հաշտարար դատա-
ւորների կայքերի ցինգը փոքրացնելու մա-
սին:

ՍԿՈՊԻՆ, 28 սեպտեմբերի: Այսօր պարտա-
տէրերի դանդաղ պատճառով վեր են գրված
բանկի կասսան և պահեստի արկղը դան-
ձարանի մէջ: Գումարներ ամենին չը կային:
Ֆեօդօր Սոլօգովիկովի գործի վերաբերու-
թեամբ, որ մեղադրված է 500,000 ռ. ծածկե-
լու մէջ տուրքերից ազատվելու համար, որ
կեղծել է առեւտրական զբոսը և բաւանսը և

այդը և իսկական գրքերը, մեղադրվում են նրան մասնակցելու մէջ Սօլօգովիկովի երեք եղբայրները և վաճառական իվակին: Վկաները 60 մարդ են:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹՅՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 սեպտեմբերի: Վախճանվեցու պետական խորհրդի անդամ գեներալ-ադյուտանտ կոմս Բարանցեվ: „Новое Время“ լրագրի հաղորդում է. նախագիծ է սենատի արևիվի նոր կազմակերպութիւն: Մտածում են այդ գործը յանձնել գիտական մասնագետի, որ կարողանայ որոշել արևիվի պատմական նիւթերը: Իվան Սերգեևիչը հուրդնեցի առողջութիւնը բարձրացնելու, այնպէս որ նա նորից սկսեց աշխատել: Տուրգենևով վէպ է գրում:

ՄՕՍԿՎԱ, 28 սեպտեմբերի: Պուշկինի պատգամայի վրա ճանապարհների հաղորդակցութեան կարգաւորի ինժեներ Կազակով փայտով ծեծեց Կուկուլեվի կայարանի մօտ ֆետովանների պաշտպան Միլերին: Սօլօգովիկովի անանկութեան մասին դատաստանական գործը երեք դարձեալ մի շորս օր կը տևի:

Կիև, 28 սեպտեմբերի: „Киевлянин“ լրագրի խմբագիր Պիլնոս գաղապարով է երեք ամսով կալանաւորմանը բանտի մէջ մամուլի մէջ դուժմայի ձայնաւորին վերաւորելու համար:

Ս. ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 28 սեպտեմբերի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 12 կ., երկրորդ 91 ռ. 87 կ., երրորդ 91 ռ. 50 կ., չորրորդ 90 ռ. 12 կ., հինգերորդ 90 ռ. 25 կ., ներքին 5% տոմսին փոխառութեան տոմսակը արժէ 212 ռ. 25 կ., երկրորդ 206 ռ. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 50 1/2 կ., երկրորդ 89 ռ. 50 1/2 կ., երրորդ 89 ռ. 75 կ., ոսկի 8 ռ. 19 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24,12 պէնս, Ամստերդամի վրա 122,12 պէնս, Ռուսաց 100 ռ. չամբուրդի վրա արժէ 206 մարկ, Փարիզի վրա 254 ֆրանկ: Բօրսայի արամադրութիւնը աւելի լաւ է:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԵՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՌ ՓՈԲՐԱՅՈՒՄՆ (MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆԻ ԳԱԼԵՐԵԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ռ. 10 կ.	Թէյի հետ ամեն տեղ 1 ռ. 30 կ.
1 " 20 "	1 " 60 "
1 " 40 "	1 " 90 "
1 " 60 "	2 " 20 "
1 " 80 "	2 " 50 "
ամենալաւը 2 ռ.	3 " — "

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօխաղի և Կախօ-Ֆրայ էսսենցիայի, Պարմերի բիսիլիտների, Բազրի կօնֆեկանների, Շեֆերի գանակների, Տօրնե-րի գրէնների, Գառի հրացանների, Վեկի-րէփօլիների, Բարնսի թամբերի, Մեկինի ամանների, Կոլմանի կրակակալ և մանանի, Շվարցի ալբոմներ և այլն և այլն:

1—100

Լոյս տեսաւ Կ. ՍԱՌԱԿԱՆՆԻ «ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ» վերնագրով գրքը: Երեք օրինակից պակաս 25 ՌԱՐԱԿԱՆՈՒՄ:

Երեք օրինակի գինը ճանապարհածախսով 1 ռուբլ:

Գումարով առնողներին գինում կը լինի 15% մինչև 30%:

Հեղինակի հասցէն. Таганрогъ, Мо-настырская улица, д. Өомина, Сар-гатову.

8—10

Նոր ստացվեցան ամենալաւի ՊԱՊԻՐՈՒԹԻՒՆ արկղիկը 32 կողմից մինչև 2 ռուբլ 20 կողմի:

Ցանկացողները կարող են գնել 10% ուղարկել, իսկ ֆաբրիկայի գումարը վճարել ապրանքը ստանալուն պէս:

Պահանջողներին ուղարկվում է պրէս-կուրանտ:

Մեր հասցէն. РОСТОВЪ на Дону, Мартыроу ТЕРЪ-АСТВАЦАТУРО-ВУ.

8—10

ՆԱԽԻՆ ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿՈՂ

„Гусан“ շաբաթագիր, իվան Ֆելիկսովիչ ՏՈՐՈՒՅԿՆԻ ակսել է նորից պարագել ԱՏՎՈԿԱՏՈՒԹՅԱՄԵ: Նա յանձն է առնում Անդրկովկասի բոլոր ԳԱՐԱՍՏԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՆՆԵՐԻ մէջ թէ քաղաքական և թէ բրէտանական ԳՈՐԾԵՐԻ պաշտպանութիւնը: ՀԱՍՑԷՆ. Թիֆլիս, Саперная (Մապերնայա) փողոց, № 5.

9—10

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԻԻՐՆԵՐ

ս ի ս տ ե մ ա տ ի ք ա կ ա ն ը ն թ ա յ ք Գրիգորի վարձեկան

Հայոց միջնակարգ ուսումնարանների համար մասն առաջին (ամբողջ թուեր) Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն ինքրիներին երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կօպ.

Ուսումնարաններին գինում 20%:

Ծախվում է Վ. Շահինգիւհեանի լրագրական գործակալութեան խանութում:

Օտար տեղերից գինում են այս հասցէով

Тифлисъ, въ Агентство В. Шавердо-ва:

ԲԱՅՅԻ ԽԱՄԱՅԻ ՄԷԼԻԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից Թիֆլիսում վաճառվում է

„Մշակ“ խմբագրատանը. — Կենտրոնական գրադաճառանոցում: Միլիանովի տանը № № 3 և 4. Պ. Ջաբարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրադաճառանոցում“. — Պ. Էնֆրանտեանցի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացիք կարող են գինել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետեւեալ հասցէով: ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“. РАФФИ.

Մի ՌԻՍՈՒՑԻՑ, որ երկար ժամանակ ուսուցչութեամբ է պարտադիր ցանկանում է առնել ՄԱՍՆԱՌՈՐ դասերը ընտանիքներում, զիտարապէս ՀԱՅԵՐԷՆ լեզուից, ԹԼԻԱԲԱՆՈՒԹՅՆԻՑ և ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՆԵՐԻՑ:

Պայմանները կարելի է իմանալ „ՄՇԱԿ“ խմբագրատանը:

9—10

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

48—100

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիեննայում գինեւորվ հետեւալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մի շի փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւնը № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ ամենայն տեսակի, Ֆրանսիական և անգլիական երկաթէ կրակաւորներ 8—30 ռ., չամադաններ 250—25 ռ., սակիլյաժներ 1. 30—12 ռ., սոււն դուռնի եր ճանապարհի 6—35 ռ., մարմաններ (погребцы) 6—25 ռ., սա մօ վարն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուլանի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ, ու մի վալն ի կն եր մրա մօ ռն ի 38 ռ.—75 ռ., հրացաններ երկու լուսնի 6—32 ռ., աէփօլիէրն եր ամենայն տեսակ 3. 50—30 ռ., պատրոններ (գուլաններ) թէփօլիէր, սիգար Բենդարգի ֆարրիկից պապի-րոս և թամբաքու կուլանովի գրկի պապիլիօզի. 5,000 ֆունտ թէյ (չայ) եր. ՊԱՊՈՎՆԻՐԻ, բիսիլիտ. (սուխար չայու և կաֆէի) Լինէմի. կօֆէ Լինէմի և Միլէյսոնի. Պետերբուրգում 40—1 ռ. 25 կ. հայիկներ ամենայն տեսակ 28 կ.—240 ռ., պրօրկայ գինեւորանների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пучек), պաղտանի սամուլարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆարրիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. գուլթիւր, գրչակիթներ 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիլի 1—60 կ.—12 ռ., դա-նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուլանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր, միս կարելու մաշկայ. Անգլիական ու թոնի, Բրիտանիայի չայնիկներ, կաֆէ-նիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտր—ջուր մաքրելու, կրակակալ կարօկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծախի, թուղթ փողար, կանկերու-ներ, սուրճուշ, մատիա, գրէչ երկաթէ, գրչակիթ, քարտասխտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գրչակներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկ գուլթիւր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-միւկէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. ջուխտ, պղ-սապոնկաններ վարչակու, Բենդիւնի ԿԱԼՕՆԵՐԻ, ամեն տեսակ, գուլթաններ կա-նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գուլու-տիկներ, գնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և չաքի. սանդղեր ջիւ-մայու ոսկորէ, գուլապիլիօզի և փայտէ, շապիկներ գլխի, շոքի, սապոնի, պղի և կարտի համար. չուլքի թէյ (бумага) մատիկի կօժի և շալէ (гарусъ) ֆէլ-չատկէք մարդկերանց և կանանց, պարտմաններ, քրտաններ, պապիլիտի ամաններ, ամսը գուլանների խմբագրներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտաւէա ջրեր, պուգրա, Կիլցերին ջրի քաղալ, հոտաւէա պարաշոնի կիլեթի ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և գինումով վերադառնալ ապ-րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գանվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍՍԵԱՆՑԻ պահեստում. (ВЪ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-կիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են գինել հետեւեալ հասցէով. Тифлисъ Ми-хаилу Н. Теръ-Никогосову.

145—180

Մի շի փողոց, Կաթօլիկէսկայա փողոցի անկիւնը № 13.